ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Նոյեմբերի 12—13-ին կայացավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը, որը նվիրված էր Հայաստանում սովետական իշխանության հաստատման և Հայաստանի կոմունիստական կուսակցության հիմնադրման 50-ամյակին:

Հոբելյանական ժողովին մասնակցելու էին եկել կուսակցության և կառավարության ղեկավարները, ՀՍՍՀ ԴԱ ակադեմիկոսներ և թղթակից-անդամներ, ակադեմիայի գիտահետազոտական հիմնարկների աշխատողներ, բուհերի դասախոսներ, ինչպես նաև ՍՍՀՄ և միութենական հանրապետությունների գիտությունների ակադեմիաների պատվիրակներ:

Ժողովը ներածական խոսքով բացեց Հայկական ՍՍՀ գիտությունները ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս *Վ. Հ. Համբարձումյանը:*— Հայաստանում գիտությունը իսկական բարգավաճում ապրեց միայն Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունից հետո,— ասաց նա:— Միայն սովետական իշխանության օրոք աշխատասեր և տաղանդավոր հայ ժողովուրդը ստացավ գիտության ու մշակույթի զարգացման անսահման հնարավորություններ: Հայ գիտնականները, լինելով սովետական գիտության առաջավոր դիրքերում, զգալի ավանդ են ներդնում գիտատեխնիկական առաջադիմության տեմպերը արագացնելու և ժամանակակից գիտության նվաճումները երկրի ժողովրդական տնտեսության մեջ արմատավորելու ասպարեզում:

Այնուհետև ողջույնի խոսքով հանդես եկավ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. *Ա. Ե. Քոչինյանը:* Ողջունելով ժողովի բոլոր մասնակիցներին, և ի դեմս նրանց հանրապետության բոլոր գիտական աշխատողներին, ընկ. Քոչինյանը Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի անունից գիտական աշխատողներին նորանոր հաջողություններ ցանկացավ հանուն հայրենի գիտության հետագա վերելքի:

Հոբելյանական ժողովում ելույթ ունեցավ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, ակադեմիկոս *Մ. Դ. Միլիոնշչիկովը,* որը ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահության, պրեզիդենտ Մ. Վ. Կելդիշի, սովետական բոլոր գիտնականների անունից Հայաստանի պանծալի հոբելյանի կապակցությամբ ջերմ ու սրտագին շնորհավորանքներ հղեց հանրապետության գիտնականներին և բոլոր աշխատավորներին: Նա բարձր գնահատական տվեց հայ գիտնականների աշխատանքներին և վստահություն հայտնեց, որ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի և միութենական հանրապետությունների գիտությունների ակադեմիաների գիտնականների հետ հայ գիտնականների ստեղծագործական սերտ բարեկամությունը կօգնի լուծելու ժամանակակից գիտության բարդ պրոբլեմները:

«Գիտության զարգացումը Սովետական Հայաստանում» զեկուցմամբ հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս *Վ. Հ. Համբարձումյանը*[*]։

Ընդհանուր ժողովի երկրորդ նիստում լսվեցին գիտական երեք զեկուցումներ։ «Կոմունիստական կուսակցության կազմավորումը և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» թեմայով զեկուցեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ. *Գ. Ա. Գալոյանը*։

«Հայաստանի հանքային ռեսուրսները և նրանց ընդլայնման ուղիները» զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՀ ԳԱ վիցե-պրեզիդենտ *Ս. Ս. Մկրտչյանը*։

Հայաստանում էլեկտրոնային հաշվողական տեխնիկայի ստեղծման աշխատանքների մասին զեկուցեց մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի դիրեկտոր *Ֆ. Տ. Սարգսյանը*։

Սովետական Հայաստանի հոբելյանի առթիվ գիտության աշխատողներին ողջունեցին եղբայրական հանրապետությունների գիտությունների ակադեմիաների պատվիրակությունների ղեկավարները՝ Վրացական ՍՍՀ ԳԱ վիցե-պրեզիդենտ *Ռ. Ռ. Դվալին*, Ուկրաինական ՍՍՀ ԳԱ վիցե-պրեզիդենտ *Ա. Ա. Սմիրնովը*, Կիրգիզական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս *Կ. Ռ. Ռիսկուլովան*, Էստոնական ՍՍՀ ԳԱ գլխավոր գիտական քարտուղար *Վ. Ա. Մաամյագին*, Մոլդավական ՍՍՀ ԳԱ նախագահության գիտական քարտուղար *Գ. Վ. Զալիհը*, Տաջիկական ՍՍՀ ԳԱ ֆիզիկայի ինստիտուտի դիրեկտոր *Ա. Ա. Ադխամովը*, Թուրքմենական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս *Օ. Ն. Մամեդնիյազովը*, որոնք ջերմ ողջույններ և բարեմաղթություններ հղեցին հայ գիտնականներին ու նորանոր հաջողություններ ցանկացան նրանց։

Ընթերցվեցին միութենական հանրապետությունների գիտությունների ակադեմիաներից ստացված ողջույնի բազմաթիվ հեռագրեր։

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

---

[*] Ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի զեկուցումը տպագրվում է «Հանդեսի» այս համարում։— ԽՄԲ։